

---

# Մամլո հաղորդագրություն

---

## ՀԱՅՏԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ. 2022թ.-ի «Creative Armenia-AGBU Fellowship»-եր

*Արվեստի բոլոր ոլորտների նորարար արվեստագետներին հրավիրում ենք դիմել*

Օգոստոսի 20, 2021թ.

### Անհապաղ հրապարակման համար

Creative Armenia-ն և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) ուրախ են հայտարարել 2022թ.-ի «Creative Armenia-AGBU Fellowship»-եր ծրագրի հայտերի ընդունման մեկնարկը: Կինոգործիչները, երաժիշտները, գրողները և ստեղծարար բոլոր ոլորտների արվեստագետները կարող են դիմել ծրագրին, որը առաջարկում է ֆինանսավորման, մենթորության, առաջխաղացման և ռազմավարական աջակցության ամբողջական փաթեթ: Հայտերն ընդունվում են մինչև 2021թ.-ի նոյեմբերի 1-ը, 23:59-ը (երևանյան ժամ):

«Մենք ոգևորված ենք այս մշակութային համագործակցությունը շարունակելով», — ասաց ՀԲԸՄ Կենտրոնական խորհրդի անդամ Անի Մանուկյանը: «Այս տարի մենք ընդլայնում ենք մեր ծրագիրը՝ աջակցելու ավելի մեծ թվով արվեստագետների ամբողջ աշխարհից»:

«Creative Armenia-AGBU Fellowships» ծրագիրը բացառիկ հնարավորություն է տալիս ամբողջ աշխարհի արվեստագետներին ստանալու մեկամյա աջակցության փաթեթ, որը ներառում է 5,000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ, կարիերայի ռազմավարական պլանավորման դասընթացներ, արդյունաբերական կապեր և աշխարհահռչակ հեղինակների, կինոգործիչների, ֆիլմարտադրողների, անիմատորների, երաժիշտների և շատ ուրիշների հետ մի շարք մենթորության հանդիպումներ: Creative Armenia-ի մենթորներից են՝ երաժիշտներ Տիգրան Համասյանը, Սեբուհի, Կուրնգ Կուն և Տաթևիկ Հովհաննիսյանը, կինոգործիչներ և ֆիլմարտադրողներ Ատոմ Էգոյանը, Մարի-Սոֆի Կուկները, Սայմոն



CreativeArmenia ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Լերենգ Վիլմոնսոնը և Շեյն Բորիսը, գրողներ Անդրե Դուբուս III-ը, Քերոլ Էդգարյանը, Քրիս Բոհջալյանը և Միշելին Ահարոնյան Մարկոմը, Նկարիչներ Տիգրան Ձիթողյանը, Դելֆին Մորին, Ռոբերտ Լոբելը, Էնդրյու Դեմիրջյանը, և արվեստի բոլոր ոլորտներից հարյուրավոր այլ մենթորներ:

«2022 Creative Armenia-AGBU Fellowships»-ի ընտրյալ 10 արվեստագետները սերտորեն կաշխատեն Creative Armenia-ի և ՉԲԸՄ-ի թիմերի հետ՝ իրենց կարիերային արագ առաջընթաց տալու և հայ ժողովրդի մշակութային դեսպանները դառնալու համար: Արվեստագետների ներկայությունը Չայաստանում պարտադիր չէ:

2021թ.-ի «Creative Armenia-AGBU Fellowship»-երի արվեստագետներն են՝ գրող Օլիվիա Կաթրանջյանը, արվեստի համադրող Նահիրի Խաչատուրեանը, երաժիշտ և երգահան Նոյ Կարապետյանը, կոմպոզիտոր, երգիչ և երգահան Բեյ Ռուս, մեդիա արվեստագետ և լանդշաֆտային ճարտարապետ Արուսյակ Գաբրիելյանը, նկարիչ և անիմատոր Արևիկ Դորը, կինոռեժիսոր Էմիլի Մկրտիչյանը:

«Մինչ մենք նշում ենք 2021թ.-ի արվեստագետների նվաճումները, մենք անհամբերությամբ սպասում ենք բավահայտելու և աջակցելու հայ բացառիկ արվեստագետների նոր ալիքը», — ասաց Creative Armenia-ի հիմնադիր տնօրեն Կարին Չովհաննիսյանը:

Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների և ձեր հայտը մինչև նոյեմբերի 1-ը ներկայացնելու համար այցելեք՝ [creativearmenia.org/fellowships](http://creativearmenia.org/fellowships) և [agbu.org/creativearmenia](http://agbu.org/creativearmenia) կայքէջերը:

Այժմ պատմական երրորդ ժամկետում, «Creative Armenia-AGBU Fellowship»-եր ծրագիրը Creative Armenia-ի և ՉԲԸՄ-ի համագործակցությունն է, որի մեկնարկը տրվել է 2018թ.-ին:

Creative Armenia-ն մշակութային հիմնադրամ է հայ ժողովրդի համար, որը հայտնաբերում, զարգացնում ու խթանում է արվեստի տարբեր ոլորտների նորարար ստեղծագործողների: Սփյուռքի և Չայաստանի վստահությունը վայելող ՉԲԸՄ-ն տասնամյակներ շարունակ հնարավորություններ է ստեղծում հայ արվեստագետների համար՝ տրամադրելով կատարողական արվեստի համալսարանական կրթաթոշակներ, ամառային աշխատափորձեր և մասնագիտական նախագծեր, ինչպիսիք են «ՉԲԸՄ Երաժշտական Չայաստան» ծրագիրը և «ՉԲԸՄ Սայաթ-Նովա միջազգային կոմպոզիտորական մրցույթը», որոնք գտնվում են ԱՄՆ-ում 2012թ.-ին, իսկ Եվրոպայում 2016թ.-ի հիմնադրված ՉԲԸՄ-ի Կատարողական արվեստի բաժնի հովանու ներքո:

**Մեդիա հարցումների համար՝**

Անուշ Տեր-Խաչատրյան / [anush@creativearmenia.org](mailto:anush@creativearmenia.org)



CreativeArmenia ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Հայկ Արսենյան / [harsenyan@agbu.org](mailto:harsenyan@agbu.org)